№ 112 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 27

1901

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 27 № 112

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻՉՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հայրապետ, Մինաս եւ Առաքել Աւետիսեանները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին եւ ծանօթներին իրանց սիրելի հօրեղբօր՝

ՊԵՏՐՈՍ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ

մահը, որ տեղի է ունեցել Հանդամէջում, մայիսի 20-ին։ Հոգեհանգիստը կատարվելու է կիրակի, մայիսի 27-ին, առաւօտեան ժամը 11-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում։
1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մատենագրութիւն. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վերջին գիշեր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Թոյլ տուէք այս անգամ, ընթերցող, հեռանալ մեր կեանքից։ Մինչեւ այժմ ես ձեզ հետ խօսեցի շատ բաների մասին, բայց գիտեմ, որ դուք շատ էլ ուրախ եւ գոհ մնալու առիթ չունէք։ Միշտ վատութիւն, միշտ ստուերներ, միշտ ցաւ։ Բայց մթթէ չենք կարող գոնէ մի անգամ մի լաւ, յուսատու բան բերել մեր առաջ։ Իմ մեղքը չէ, ի հարկէ, որ ուրախանալու համար պէտք է անպատճառ հեռանալ մեր իրականութիւնից։ Որքի եւ զրկվածի համար մի մի անգամ որքան լաւ է նայել Աստուծու լոյս աշխարհին եւ տեսնել արեւ, լոյս, ջերմութիւն։

Ես կը դնեմ ձեր առջեւ հեռաւեալ պատկերը։

Մոսկվայում, 1818 թուականին, ծնվում է մի երեխայ։ Մի շատ տգէտ ու կոպիտ ընտանիք էր այն միջնավայրը, ուր նա լոյս աշխարհ տեսաւ, մնվեց, մեծացաւ։ Մինչեւ իսկ ոչինչ կրթութիւն չը ստացաւ նա։ Հազիւ միայն գրաճանաչ դառնալով, նա իր հարուստ հօր խանութում «բիլչի», երեխայի դեր էր կատարում։ Ժլատ հայրը մի քանի գրօշներ էր տալիս նրան եւ այդ ողորմելի «ռոճիկով» էր նա ապրում։ Այսպէս անցան նրա երիտասարդութեան ոսկի օրերը։

Ի՞նչ կարող էր դուրս գալ մի այպիսի չրջանից։—Մենք, հայերս, կարող ենք այս հարցին ամենաճիշդ պատասխանը տալ։ Մեզանում էլ կան շատ ու շատ այպիսի հայրեր ու որդիներ եւ մենք գիտենք, հարիւրաւոր տարիների փորձով գիտենք, որ որդին էլ հօր կտորը պիտի դառնար.—հարուստ «առվդագեար», իր փորի ստրուկ, անտարբեր, չաղ ու կլորիկ մի տղրուկ, որի համար արարչագործութեան ամբողջ խորհուրդը երկու ծայրի մէջ է. «ուտել, քնել»։

Բայց Մոսկվայի տգէտ վաճառականի ընտանիքից դուրս եկաւ մի Սօլդատենկօվ։ Նա նոր մեռաւ, բայց թողեց մի անուն, որ ամբողջ Ռուսաստանում հռչակված է եւ չի մոռացվի երկար ու երկար ժամանակ։

Ի՞նչպէս ստացաւ նա այս հռչակը։

Տգէտ, համարեա անգրագէտ վաճառական է կոչվում Սօլդատենկօվ։ Բայց նա մի անսահման յարգանք ունի դէպի գիտութեան, գրականութեան մարդիկ։ Դա մի պլատոնական յարգանք չէ, խօսքերով, նոյն իսկ ոսկեզօծ խօսքերով արտայայտվող յարգանք։ Սօլդատենկով հասկանում է, որ ինքն էլ կարող է իր հայրենիքի առաջադիմութեան ծառայել։ Ինչ անենք, որ նա չունի ուսում, գիտութիւն, գրել, շարադրել չէ կարող։ Դրա փոխարէն նա գիտէ, որ շատ կան գիտուն, աշխատող մարդիկ, որոնք չունեն այն, ինչ ունի ինքը—հարստութիւն։ Եւ նա իր փողը դնում է բարի գործի համար։ Հիմնում է հրատարակչական գործ եւ զարմանալի եռանդով, անչէջ սիրով տանում է այդ գործը ամբողջ 50 տարի...

Սիրում էր նա գիրքը, լաւ, խելօք գիրքը։ Դրա համար նա ոչինչ չէր խնայում, եւ հատորներ հատորների ետեւից դուրս էին գալիս, տարածելով իրանց գեղեցիկ բովանդակութեան հետ եւ հրատարակողի անունը։

Եթէ նայենք այդ հատորներին միասին դրած, կը ստանանք մի ամբողջ գրադարան, մի հոյակապ գործ։ Բացի ռուսաց նշանաւոր գրողների գործերի հրատարակութիւնից, Սօլդատենկով առանձին ուշադրութիւն էր դարձնում թարգմանութիւնների վրա. եւրոպական լաւագոյն հեղինակներն էին թարգմանվում։ Եթէ չը լինէր այդ մեծատունը, կը տեսնէր ռուսաց գրականութիւնը Վէբերի «Ընդհանուր Պատմութեան» տասնութ ահագին հատորները, Գիբբոնի եօթն հատորները, Լավիսի եւ Ռամբոյի 8 մեծ հատորները։ Եւ նրա բոլոր հրատարակութիւններն այսպէս են։ Այդ գրադարանում են Դրոյզէն, Մօմզէն, Կուզլէր, Վէյս, Շմիդտ եւ այլն եւ այլն։

Ահա ինչ գործ թողեց այդ վաճառականը իրանից յետոյ։ Մի գործ, որ անգնահատելի ծառայութիւններ է մատուցել ռուսաց գրականութեան, որ ռուս մտքի փառքն ու պարծանքը կարող է համարվել։ Բարեգործութիւն էր դա Թերեւս, ոչ։ Հրատարակիչը փող էր տալիս հեղինակներին, թարգմանիչներին, տպագրում էր գրքեր, ծախում էր գրքերը։

Բայց բարեգործութիւնն էր նրան դրդողը, նրան եռանդ ներշնչողը։ Նա կարօտ չէր գրքերից ստացվող փողին. նա մի անչահասէր հրատարակիչ էր։ Ցիշվում են նրա ուրիշ բարեգործութիւններն էլ. նա օգնում էր ուսանողներին, օգնում էր կարօտ գործիչներին։ Գիտութեան, առաջադիմութեան, արուեստների հովանաւոր էր նա, մեկենաս, այս բառի լաւ մտքով։

Եւ որքան համեստ ու պարտաճանաչ մարդ։ Կօպէկներ տուող եւ կօպէկների փոխարէն թմբուկներ, փողեր ու որոտաձայն աղմուկներ պահանջող «բարեգործները» թող նայեն այդ պատկառելի ծերունուն։ Այդքան բան անելուց յետոյ նա փախչում էր հասարակական ցոյցերից, շնորհակալութիւններից։ Դրանցից նա վախենում էր ինչպէս կրակից։ Անցեալներում լրացաւ նրա 80-ամեակը. նրանից խնդրեցին թոյլատրութիւն, որ մի ճաշի ժամանակ նրան շնորհակալութիւն յայտնվի նրա արած մեծագործութիւնների համար։ Բայց նա ոչ միայն մերժեց այդ պառաջարկութիւնը, այլ եւ սկսեց պաշտպանել «մի պէր Ապատուութիւն», որ չը խանգարեն իր հոգեկան հանգստութիւնը։

Ահա մի հարուստ, ահա մի անզարգացած վաճառական։

Վերջին ժամանակներս մի քանի հարուստ վաճառականներ մեռան Մոսկվայում. Տրեդեակովը ամենահարուստ պատկերագարան թողեց, Սօլդաշչիկովը թատրոն է կառուցել, Սօլդատենկովը գրքերի հրատարակութեամբ հռչակվեց։

Տեսէք, ընթերցող, այս մարդկանց եւ ապա նայեցէք ձեր շուրջը, որոնեցէք, եթէ կարողանում էք, համանման օրինակներ ձեզ շրջապատողների մէջ։ Հարուստներ—որքան կամենաք. կարօտութիւնը—անծայր ծով։ Որոնեցէք։ Կը գտնէք նմանութիւն, գոնէ թոյլ, հեռաւոր նմանութիւն...

Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

Վ. Պ. Ավենարիուս։ «Ինչ է խօսում սենեակը». մանկ. զրոյց թարգմ. Զ. Ց.-Գ. հրատ. Թ. Հ. հրատ. Ընկ. պատկերազարդ, 27 եր. 8⁰ գ. 10 կ. Թիֆլիս 1900 թ.։

Ավենարիուսի գրքոյկը, որի վերնագիրը բերված է վերեւում, կարիք չունի յանձնարարված լինելու։ Նա ամենահետաքրքրական մանկական գրքերից մէկն է, գրված գեղեցիկ իւմորով։

Թարգմանութիւնը բոլորովին աջող է եւ տիպը՝ գեղեցիկ։

II

В. Вартаньянцъ. „Антропологическая философія П. Миртовъ и субъективный методъ въ соціологіи„. 38 стр. ц. 25 коп. Тифлисъ 1901 г.

Պ. Վարդանեանի գրքոյկը, որ կրում է «Մարդաբանական փիլիսոփայութիւն։ Պ. Միրտով եւ սուբիեկտիվ մեթոդը հասարակագիտութեան մէջ» վերնագիրը, բաղկացած է չորս գլուխներից։ Առաջին եւ երկրորդ գլուխներում պ. Վարդանեան բանակռիւ է մղում «օբիեկտիվ մեթոդի» կուսակից պ.պ. Սարուվէի եւ Բելտովի հետ Միրտովի աշխարհայեացքի առիթով. երրորդ գլխում առաջ է բերում Միրտովի հայեացքները գիտութիւնների դասաբաշխման եւ այն դերի մասին, որ տնտեսական գործօնը խաղում է պատմութեան մէջ. չորրորդ գլխում փորձում է սահմանել, թէ ինչ է սուբիեկտիվ մեթոդը։

Մեզ թւում է, թէ պ. Վարդանեանին չէ աջողում ոչ պարզել վիճելի փիլիսոփայական հարցերը, ոչ էլ ժողովրդականացնել փիլիսոփայական վարդապետութիւնները։

Ճիշդ է, որ այդ շատ էլ հեշտ բան չէ։

Տ. Ց.

—

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) «Գործնական խոհարարական դասագիրք». կազմ. տիկին Վ. Ռօտինեանց. հրատ. Թ. Հ. հրատ. Ընկ. 214 եր. 8⁰ գ. 1 ր. Թիֆլիս 1901 թ. 2) «Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ». ժող. Ս. Վարդանեանց. հրատ. Թ. Հ. հրատ. Ընկ. 123 եր. 16⁰ Թիֆլիս 1901 թ. 3) Անդրանիկ. «Տէրսիմ». ճանապարհորդութիւն և տեղագրութիւն. հրատ. Թ. Հ. հրատ. Ընկ. 237 եր. 16⁰ գ. 75 կ. Թիֆլիս 1901 թ. 4) Բագրատ Այվազանց. «Հիսախօսներ Արծիւը». պատմ. վէպ. 1801—1829 թ. (Կովկասի տիրապետութեան հարիւրամեակի յիշատակին). 208 եր. 16⁰ գ. 1 ր. Թիֆլիս 1901 թ. 5) Բժշկ. Վ. Արծրունի «Անմոռանութիւն» առողջ. էտիդ. (արտատպած «Մուրճ» ամսագրից). 216 եր. 16⁰ գ. 75 կոպ. Թիֆլիս 1901 թ. 6) «Քահանայական խնդրի շուրջը» գրեց Մեսր. ք. Մելեան. 120 եր. 16⁰ գ. 50 կ. Թիֆլիս 1901 թ. 7) Շիլլէր, «Օրլէանի կոյսը». բնագրից ամփոփեց Ս. Թառայեանց. 50 եր. 16⁰ գ. 20 կոպ. Թիֆլիս 1901 թ. 8) Международная рыбопромышленная выставка, устраиваемая въ С.-Петербургѣ въ 1902 году. СПБ. 1901 г.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայիսի 25-ին, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Թէօդորօվնայի ծննդեան օրը, Ալէքսանդրօ-Նեվսկի տաճարում գոհացողական մաղթանք կատարվեց։ Մաղթանքին ներկայ էին՝ Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցին, կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Ֆրեզէ, գեներալներ, զանազան վարչութիւնների եւ հիմնարկութիւնների ներկայացուցիչներ ու բազմաթիւ ժողովուրդ։ Մաղթանքներ կատարվեցին նոյնպէս եւ հայ լուսաւորչականների, կաթոլիկների եւ բողոքականների եկեղեցիներում, մահմեդականների մզկիթներում եւ հրէաների սինագոգներում։

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) «Գործնական խոհարարական դասագիրք». կազմ. տիկին Վ. Ռօտինեանց. հրատ. Թ. Հ. հրատ. Ընկ. 214 եր. 8⁰ գ. 1 ր. Թիֆլիս 1901 թ. 2) «Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ». ժող. Ս. Վարդանեանց. հրատ. Թ. Հ. հրատ. Ընկ. 123 եր. 16⁰ Թիֆլիս 1901 թ. 3) Անդրանիկ. «Տէրսիմ». ճանապարհորդութիւն և տեղագրութիւն. հրատ. Թ. Հ. հրատ. Ընկ. 237 եր. 16⁰ գ. 75 կ. Թիֆլիս 1901 թ. 4) Բագրատ Այվազանց. «Հիսախօսներ Արծիւը». պատմ. վէպ. 1801—1829 թ. (Կովկասի տիրապետութեան հարիւրամեակի յիշատակին). 208 եր. 16⁰ գ. 1 ր. Թիֆլիս 1901 թ. 5) Բժշկ. Վ. Արծրունի «Անմոռանութիւն» առողջ. էտիդ. (արտատպած «Մուրճ» ամսագրից). 216 եր. 16⁰ գ. 75 կոպ. Թիֆլիս 1901 թ. 6) «Քահանայական խնդրի շուրջը» գրեց Մեսր. ք. Մելեան. 120 եր. 16⁰ գ. 50 կ. Թիֆլիս 1901 թ. 7) Շիլլէր, «Օրլէանի կոյսը». բնագրից ամփոփեց Ս. Թառայեանց. 50 եր. 16⁰ գ. 20 կոպ. Թիֆլիս 1901 թ. 8) Международная рыбопромышленная выставка, устраиваемая въ С.-Петербургѣ въ 1902 году. СПБ. 1901 г.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐ

(Գ. Դը-Մօպասանի)

—

Նա մեռաւ հանգիստ եւ առանց տանջանքների, ինչպէս վայել էր մի անարատ կնոջ։ Եւ նա պառկած էր այժմ իր անկողնում, մէջքի վրա, փակած աչքերով, հանդարտ դէմքով, իսկ նրա սպիտակ երկար մազերը այնպէս հարթ էին սանրած, կարծես թէ մահից մի տասը րոպէ առաջ հանգուցեալը մեծ խնամքով պարապել էր նրանց վրա։ Նրա սպիտակ անկենդան երեսը այնպիսի հեզութիւն էր արտայայտում, որ պարզ երեւում էր, թէ ինչ խոնարհ հոգի էր բնակվում այդ մարմնի մէջ, թէ ինչպիսի խաղաղ վախճանի արժանացաւ նա իր այդ կեանքի համար։

Զոքած նրա անկողնու մօտ, լալիս էին յուսահատ նրա երկու որդիքը, տղան, հաստատ բարոյական սկզբունքների տէր անողոքելի, արդար դատաւորը, եւ աղջիկը—քոյր Եւլալիան, միանձնուհին։

Հանգուցեալը մանկութեան հասակից զինել էր նրանց անխախտելի բարոյականութեան կանոններով, ներշնչել էր նրանց հաստատ հաւատ եւ պարտաճանաչութիւն առանց զիջողութեան։

Որդին, դառնալով դատաւոր, օրէնքի հիման վրա՝ առանց խղճալու պատուհասում էր թոյլերին, որոնք սայթաքում էին կեանքի ճանապարհին։ Աղջիկը, թափանցված առաքինութեամբ, ողորմում էր խեղճերին, դարմանում էր հիւանդներին եւ այդպիսով նմանվում Քրիստոսին։

Կոյսը յուսահատ համբոյրներով ծածկում էր իր մօր ձեռները, որոնք կարծես չինված էին փղոսկրից։

Դուռը կամաց բաղխեցին։ Այդ ձայնը ստիպեց ողբացող զաւակներին բարձրացնել իրանց գլուխը։ Սենեակը մտաւ քահանան, որը նոր էր վերջացրել իր ճաշը. նա կարմրել էր եւ հեւում էր, շնորհիւ մարսողութեան գործարանների, որոնք սկսել էին կատարել իրանց դերը. բացի դրանից նա խմել էր բաւականաչափ օղի, որպէս զի, հանգուցեալի պահպանութեան ժամանակ, յաղթէ յոգնածութեանը։ Նրա դէմքը արտայայտում էր այն կեղծ թախիծը, որը յատուկ է ամեն մի հոգեւորականի, որի համար թաղումը ներկայանում է արդիւնաւոր հասոյթներից մէկը։

Խաչակնքելով, նա մօտեցաւ նրանց եւ ասաց իր սովորական ոճով. «Է՛հ, իմ խեղճ զաւակներս, ես եկել եմ օգնելու ձեզ անցկացնել միասին այս սգալի ժամերը»։

Բայց քոյր Եւլալիան շտապով վերկացաւ եւ ասաց. «Շնորհակալ եմ, հայր իմ, բայց ես ու եղբայրս կամենում ենք միայնակ անցկացնել այս գիշեր հանգուցեալի հետ. չէ՞ որ այս վերջին րոպէներն են, որ մենք անց ենք կացնում նրա հետ... այո՛, մենք կամենում ենք մնալ միայնակ, երեքով... ինչպէս առաջ... երբ մենք դեռ երեխայ էինք եւ մեր խեղճ... խեղճ մայրը»... Վերջացնել նա չը կարողացաւ, որովհետեւ արցունքները հեղեղի պէս թափվում էին եւ խեղդում նրան։

Քահանան փայլեց ուրախութիւնից, մտածելով հանգիստ եւ փափուկ անկողնու մասին, եւ միայն ասաց՝ «Ինչպէս կամենում էք, սիրելիք»։ Յետոյ նա չոքեց, կարդաց մի ինչ որ աղօթք, վերկացաւ եւ հանդարտ քայլերով դուրս եկաւ, մրմնջալով. «Այս կինը սուրբ էր»։

Նրանք մնացին միայնակ։ Անտեսանելի ժամացոյցի ճօճանակը ճօճվում էր հանդարտ, եւ նրա ձայնը սուր կերպով լսվում էր այդ խաղաղութեան մէջ։ Պատուհանից, լուսնի աղօտ ճառագայթների հետ, ներս էր գալիս ծաղիկների եւ խոտերի թարմ բուրմունքը։

Դուրսը տիրում էր համատարած խաղաղութիւն. բնութեան քունը վրդովում էր միմիայն միջատների եւ զեռունների մելամաղձոտ հաւերգը։ Ննջեցեալի շուրջը տիրում էր անվերջ խաղաղութիւն, եւ թւում էր թէ այդ բոլորը ծագում էր ննջեցեալից եւ համակում ամբողջ բնութիւնը։

Ցանկարծ դատաւորը, որ չոքած ընկղմել էր իր գլուխը վերմակի մէջ, կանչեց խուլ, հաղիւ լսելի, բայց սրտայոյզ ձայնով. «Մայր իմ... մայր իմ...»։ Իսկ քոյր Եւլալիան վայր ընկաւ յատակի վրա եւ լարված հիւանդ դրութեան մէջ, ինչպէս մի ընկնաւոր, սկսեց ծեծել իր գլուխը եւ կաթոգին ձայնով ասել. «Աստուած իմ... Աստուած իմ...»

ռում։ Քաղաքը վաղ առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորված էր։

—

Թիֆլիսի նահանգի նահանգապետի պաշտօնակատար Սվէչին, արձակուրդ ստանալով, գընում է արտասահման։ Մայիսի 24-ին նա արդէն յանձնեց նահանգի վարչութիւնը փոխնահանգապետին։

—

Մեր հասարակութեանը յայտնի են պօստային այն բաց նամակները, որոնք կրում են իրանց վրա Կովկասի, Ղրիմի, Սիբիրի, Միջին Ասիայի եւ ուրիշ տեղերի նկարները։ Այդ նամակները, որոնք հրատարակվեցին Կարմիր Խաչի ընկերութեան կողմից, մեծ ընդունելութիւն գտան եւ շուտով ապառվեցին։ Այժմ մնացել են այդ նամակները սահմանափակ քանակութեամբ։ Մեզ խնդրում են յայտնել, որ այդպիսի նամակներ ունենալ ցանկացողները պէտք է դիմեն Ս.-Պետերբուրգ, Пески, Старорусская № 3. Կարմիր Խաչի ընկերութիւնը մինչեւ այժմ հրատարակել է 98 տեսակ նամակներ։

—

Մայիսի 24-ին Թէհրանից Թիֆլիս հասաւ Յովհաննէս խան Մասեհեան, Էմադ-ուլ-Վզարէ, պարսից արտաքին գործերի մինիստրութեան նշանաւոր պաշտօնեաներից մին։ Յովհաննէս խան նշանակվել է Բերլինի պարսից դեսպանի օգնական կամ դեսպանութեան աւագ խորհրդական եւ այդ պաշտօնով գնում է Բերլին նոր նշանակված դեսպան Էհթիլամ-Սալթանէի հետ։ Երիտասարդ հայ դիպլօմատը, բացի իր պաշտօնից, անցեալ տարի դասախօսում էր Թէհրանում երկու տարի առաջ բացված քաղաքական գիտութիւնների բարձր դպրոցում, ուր նրան յանձնված էր միջազգային իրաւունքի ամբիոնը, որի համար այժմ պրոֆէսօր հրաւիրված է բելգիացի մի ուսումնական-իրաւագէտ։ Յովհաննէս խան մեր հասարակութեան յայտնի է իբր Շէքսպիրի երկերի թարգմանիչ։

—

Մայիսի 23-ին, ցերեկվայ մօտ 2 ժամին, Թիֆլիսի «Գրանդ-Օտել» հիւրանոցում ապանված գտան լեհական գրող Գրժիբիչէվսկիյի կնոջ՝ Դագնային (33 տարեկան) եւ մարգանեցի արդիւնաբերութեամբ պարապող Վլադիսլավ Աւգուստովիչ Էմէրիկին (25 տարեկան)։ Ինչպէս պատմում են, Վ. Էմէրիկ եկաւ Թիֆլիս անցեալ տարվայ հոկտեմբեր ամսին, իսկ սկսեց հիւրանոցում ապրել ներկայ տարվայ փետրվարից. ապա նա, Զասակից առաջ, Վարշավա գնաց եւ մայիսի 5-ին այնտեղից վերադարձաւ տիկին Գրժիբիչէվսկայայի հետ միասին։ Նրանք հիւրանոցում երկու սենեակ վարձեցին, որոնցից մէկի մէջ բնակվեց տիկին Գրժիբիչէվսկայա իր հնգամեայ որդու հետ, իսկ միւսում—պ. Էմէրիկ։

—

Պետերբուրգի հաղորդակցութեան ճանապարհների ինժենէրների ինստիտուտի մէջ ներկայ տարվայ գարնանը լրացուցիչ քննութիւններ չեն լինելու, եւ բոլոր վերաքննութիւնները յետաձգվում են աշունը։ Բոլոր ուսանողներին իրաւունք է տրված բոլոր քննութիւնները կամ նրանց մի մասը յետաձգել աշունը։ Սակայն այդ արտօնութիւնից շատ քիչ ուսանողներ օգտվեցին։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Սրանից մօտ մի ամիս առաջ յայտարարվեց, որ մի քանի թատերասէրներ, Ախալքալաքի անբերրիութիւնից ձնասվածների օգտին, տեղիս Արտիստական ընկերութեան դահլիճում կը ներկայացնեն «Սամէլ» ողբերգութիւնը։ Մենք մեր պարտաւորութիւնն ենք համարում մեր մարդկային զգացումները շահագործող մի քանի ստահակներին ասել, որ նրանք իրաւունք չունեն, մեր առօրեայ ցաւերը ի նկատի ունենալով, մեր բարի տրամադրութիւնները ի չարը գործ դնել։ «Սամէլի» ներկայացումը կամ, աւելի ճիշդ է ասել, նրա նպատակը բաւական հանդիսաններ էր գրաւել թատրոն։ Առաջին գործողութիւնից յետոյ բոլորը հեռացան դահլիճից եւ մնացին միմիայն ձրի մուտք գործողները, որոնք այդպիսի ներկայացումների ժամանակ ստուար թիւ են կազմում։ Մի քանի պարոններ, պատմական տարազների փոխարէն, իւրաքանչիւր էին յարմարեցրել, եւ բեմի վրա անշարժ կանգնած ճղրտում, բղաւում, գոռում, գոչում էին։ Մենք ոչինչ չը գրեցինք դրա մասին մինչեւ այժմ, ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ պարոնները կը զգան իրանց սխալը եւ ուրիշ անգամ էլ չեն յանդգնի այդպիսի հաժարձակ քայլ անելու, բայց դժբաղդաբար մենք խայտառակութիւններ սարքելու մէջ՝ միշտ ձեռներէցներ ենք։ Լսում ենք, որ նոյն «Սամէլ» ներկայացնող պարոնները դիմել են արդէն ուր որ հարկն է երկրորդ ներկայացում էլ սարքելու Բալախանիում խեղճ բանուորներին շահագործելու համար։ Հասարակութեանը զգուշացնում ենք եւ խորհուրդ ենք տալիս ուշադրութիւն չը դարձնել նրանց յայտարարութիւնների վրա»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր առաջ մի դժբաղդութիւն է պատահել Բեժանօ գիւղում. անյայտ տեղից երեւեցած մի շուն՝ առանց հաջելու՝ յանկարծ կծել է մի երեխայի ձեռքը, որը գիւղից հեռու արածացնելիս է լինում գառները. ապա մի եւ նոյն ուղղութեամբ վազելով՝ կծել է մի ուրիշ գառնարած պատանու, սակայն վերջինիս թեթեւ, այնպէս որ նոյն իսկ արիւն չէ երեւացել. ապա նոյն շունը սարերում կծել է եւ երեք թուշ հովիւների։ Իմացվել է, որ շունը կատաղած է եղել։ Թուշերը դիմել են Վարեւան գիւղացի մի ինչ որ հէքիմի, որը իբրեւ թէ դարման գիտէ ջրվախութեան դէմ։ Հայերը՝ հետեւելով նրանց օրինակին՝ նոյնպէս դիմում են Վարեւանի «պատեօրեան ինստիտուտը»... Սակայն մենք խորհուրդ ենք տալիս՝ հիւանդներին տանել Թիֆլիսի «պատեօրեան կայարանը». թող ուշադրութիւն չը դարձնեն այն հանգամանքի վրա, որ միւս երեխայի ձեռքի թեթեւ վէրքն էլ համարեա առողջացել է»։

—

ՍԵՎԱՍՏՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր առաջ Սամսօնի մօտերից երեք հայեր նըստում են մի առագաստաւոր նաւ՝ Ռուսաստան գալու համար։ Դրանց ընկերանում է եւ մի յոյն։ Ճանապարհին թիւրք նաւաստիները այդ երեք հայերին գցում են ծովի մէջ։ Յոյնը տեսնում է այդ բանը, բայց լռում է։ Սակայն դուրս գալով Սեվաստօպօլ, նա իսկոյն յայտնում է ոստիկանութեան։ Ոստիկանութիւնը խիստ միջոցներ է ձեռք առնում եւ ձերբակալում է բոլոր նաւաստիներին։ Յոյս ունենք, որ ռուսական ոստիկանութեան խիստ քննութեան շնորհիւ չարագործները չեն կարողանայ ազատվել արդարադատութիւնից»։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Զը նայելով որ հանգուցեալ Թ. Թամիրեանցը առատ ջուր մատակարարեց մեր քաղաքին եւ քաղաքի բոլոր թաղերում ջրամբարներ ու ջրանցքի ճիւղեր տարածվեցին, այնուամենայնիւ այսօր էլ տեսնում ենք, որ հայ կինը, կուժը ուսին դրած, գնում է հեռու տեղից ջուր բերելու, որովհետեւ իր բնակված թաղի ջրանցքի ջրի կէսը ժամհարեանցների ծաղկանոցն է ոռոգում, կէսն էլ նոր անց են կացրել բացվելիք քաղաքային հիւանդանոցի բակը։ Հիւանդանոցը դժուար թէ երկու տարուց յետոյ պատրաստ լինի, հետեւաբար, անցկացրած ջուրը այժմ այնտեղ, բացի փողոցը ցեխ դարձնելուց, ուրիշ որ եւ է բանի պէտք չէ. ուրեմն հարկաւոր է թողնել այդ թաղի բնակիչներին օգտվելու յիշեալ ջրանցքի ջրից գոնէ մինչեւ հիւանդանոցի բացվելը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մայիսի 18-ին հրատարակված իրադէն արգելեց այն հայերին, որոնք բնակութիւն են հաստատել Ռուսաստանում եւ Միացեալ-Նահանգներում, մտնել Օսմանեան կայսրութեան սահմանները։ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համեմատ, վերոյիշեալ երկու պետութիւնների ներկայացուցիչներն եւս անյապաղ իրանց բողոքը ներկայացրին։

—«Berliner Tageblatt»ին Կ. Պոլսից հեռագրում են մայիսի 30-ից. «Մի քանի ժամանակից Կ. Պոլսում չափազանց երկիւղալի լուրերն են տարածվում Իլդիզ-Քիոսկում տեղի ունեցող ընդհարումների մասին։ Ալբանական թիկնապահ զօրքը ապստամբվել է եւ, ինչպէս ասում են, նրան կը փոխարինեն գաւառական զօրքերը։ Այդ լուրերը ստուգել դժուար է, բայց շատ հաւանական է, որ ապստամբութիւնը տեղի է ունեցել ռոճիկ չը տալու պատճառով։

—Էրցհերցոգ Լէօպոլդ Սալվատօր, նրա կինը, աղջիկը եւ բաւարական գրինցուհի Թէրէզա միասին ճանապարհորդութիւն կատարեցին օդապարիկով։ Նրանք Վիէննայից բարձրացան առաւօտեան ժամը 10-ին եւ մէկ ու կէս ժամից յետոյ իջան մի փոքրիկ գիւղ, Ստորին Աւստրիայում։ Օդապարիկը բարձրացաւ 2000 ոտնաչափ բարձրութեամբ։ Դա օդապարիկով առաջին ճանապարհորդութիւնն է թագաւորական տան անդամների մասնակցութեամբ։ Աւստրիական լրագիրները հիացմունքով են խօսում գրինցուհիների քաջութեան մասին, որոնք, ինչպէս ասում են, շատ գոհ են իրանց ճանապարհորդութիւնից։

—Լօնդօնում խաղաղութեան բարեկամների շատ ժողովներում արդէն մի քանի անգամ բողոքներ են լսվել բօէրական պատերազմի դէմ։ Նորերս մի ժողով կայացաւ, ուր ընդունվեցին մի քանի վճիռներ. 1) Ժողովը բողոքում է հարաւ-ափրիկական հանրապետութիւնները միացնելու դէմ, եւ թէ քաղաքականութեան եւ թէ բարոյականութեան տեսակէտից անարդար է համարում այդ։ 2) Ժողովը դժգոհութեան եւ ամօթի խորին զգացմունքով հետեւում է այն անցքերին, որոնք տեղի են ունենում Հարաւային Ափրիկայում երկու տարի շարունակ։ Մանաւանդ ծանր տպաւորութիւն է թողնում ժողովի վրա, ինչպէս եւ այն բոլորի վրա, ում թանդ են մարդասիրութեան սկզբունքները, այն հանգամանքը, որ անգլիական հրամանատարները այրում են ագարակները եւ խստութեամբ են վարվում այն բօէրների զաւակների հետ, որոնք պատերազմում են իրանց անկախութեան համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Ես վերջացրի իմ ճանապարհորդութիւնը։ Ագուլիսից ուղեւորվեցի Երեւան եւ այնտեղից հին ճանապարհով, այն է Դիլիջանի եւ Ազստաֆայի վրայով. անմիջապէս դէպի Թիֆլիս։

Ես ներկայացրի ընթերցողին իմ ճանապարհորդութեան գլխաւոր կէտերը միայն։ Ինձ վրա մանր-մունր շատ ապառիկներ են մնացել։ Այդ ապառիկներից ես հանդէս կը բերեմ հետեւեալ երկուսը։

Վերադարձին, երկու տեղ ձիերի պակասութեան պատճառով ստիպված էինք ընդհատումներ անել մի-մի ժամով։ Մէկ տեղը Շարուրի տափարակի Բաշ-Նորաշէն կայարանն էր, միւսը՝ Ղազախի գաւառի Քարվանսարայ կայարանը։

—

Ի՞նչ կարող էինք մենք անել Բաշ-Նորաշէնում։ Դա, թէեւ գաւառի վարչական-պաշտօնական կենտրօնատեղն է, բայց մի անհետաքրքրական, խուլ, քնած անկիւն է։ Դա անշուք, հասարակ մի գիւղ է, որտեղ հասարակական ընդհանուր կեանքի ոչ մի նշոյլ չէ երեւում։

Ուղեկից-ինժենների հետ դուրս եկանք չրջագայելու գիւղում։ Մեր ուշադրութիւնը գրաւեցին ուղտի քարվանները։

Մենք կանգ առանք դիտելու։

Ուղեկիցս, որ մի գլուխ զբաղված էր երկաթուղու հարցերով, դիմեց ինձ ժպտալով.

—Ի՞նչպէս էք հաւանում այս գնացքները։ Եթէ մենք այժմ տասնեակ վագոններից գնացքներ ենք կազմում, սրանք էլ ուղտերից են քարվաններ կազմել։

—Տեսէք, այս քարվանների տէրերը, կատակով նկատեցի ես, չարքաշ կեանք են վարում եւ շատ անգամ ոտով են գնում, իսկ ձեր ինժեներները առաջին կարգով են հանգիստ ու հանդարտ երթեւեկում։

Ուղտերի վզին կապած զանգակները եւ բոժոժները իրանց զողանջիւնով եւ ուղտերի յամրաքայլ շարժումը՝ բացում էին մեր առաջ հին կուլտուրայի մի պատկեր։

Մի ժամանակ ուղտերի քարվանները առաջադիմութեան դեր են կատարել հին աշխարհի համար։

—Սակայն նրանց օրհասականը մօտեցել է, նկատեց ուղեկիցս. երկաթուղին դրանց դէն կը շպրտի շուտով։

Մենք մօտեցանք քարվաններից մէկին, որ կանգ էր առել գիւղում։ Նա պատկանում էր քեարիմբեգլուեցի մի Թուրքի։

—Ի՞նչ պէտք է դուք անէք, երբ անցնի երկաթուղին, հարցրինք մենք քարվանատիրոջից։

—Ի՞նչ պէտք է անենք—Ատուած գիտէ։ Մի բան երեւի կը մտածենք։

—Օրինակ՝ ինչ։

—Օրինակ՝ կը տեղափոխենք մեր գործը Արաքսի միւս ափը եւ ապրանք կը փոխադրենք երկաթուղուց դէպի Թավրիզ եւ այնտեղից դէպի երկաթուղի։

—Սակայն կարող է այնտեղ էլ երկաթուղի անցնել, յայտնեցինք մենք։

—Դէհ ինչ կարող ենք մենք, խեղճ մարդիկս, անել անողոք եւ յամառ թշնամու դէմ, որ մտքումը դրել է հետեւել մեր ամեն մի քայլին, նկատեց կտրական կերպով ուղտապանը։ Կը ծախենք ուղտերին եւ տանը կը նստենք։

Ուղտապանը յուսահատ շարժումով թափ տուեց ձեռքը եւ մօտենալով ուղտերից մէկին, որի բեռան տակից բաց էր ընկել թոկի ծայրը, ամրացրեց հակը։ Քարվանը շարժվեց։ Ուղտապանը մեզ գլուխ տուեց եւ հեռացաւ։

Մենք զբաղվեցինք հետաքրքրական խօսակցութիւնով այն բանի մասին, թէ որքան անպատրաստ է մեր երկրի ազգաբնակութեան մեծագոյն մասը իր կեանքի մէջ փոփոխութիւններ մտցնելու համար։

Երբ որ անցաւ յուսահատութեան առաջին րոպէն, նրանք մի փոքր հանգստացան եւ առատ արցունքը, որը հոսում էր նրանց աչքերից, թեթեւացրեց նրանց վիշտը։ Նրանք սկսեցին նայել ննջեցեալի դէմքին. այդ րոպէին նրանց մէջ զարթնեցին հին յիշողութիւնները եւ նրանք սկսեցին մտաբերել իրանց անցեալը, բոլոր մանրամասնութիւններով։ Այդ րոպէին նրանք սիրում էին իրանց մօրը աւելի քան երբ եւ իցէ. նրանք զգում էին այժմ, թէ ինչ մեծ կորուստ ունեցան եւ թէ ինչպէս միայնակ պէտք է ապրեն այսուհետեւ առանց նրան։

Նա նրանց նեցուկն էր, նրանց դաստիարակչուհին. նրա հետ միասին մեռնում էր նրանց կեանքը, նրանց երիտասարդութիւնը եւ նրանց ուրախութիւնը։ Նա կապում էր նրանց կեանքի հետ. նրանով էին նրանք ապրում եւ նրանով շնչում։

Եւ ահա կոյսը ասաց եղբօրը. «Դու գիտես, թէ ինչպէս մեր մայրը սիրում էր կարդալ իր հին նամակները. նրանք բոլորը ահա այս արկղումն են. եկ, կարդանք նամակները եւ կը զգանք, թէ ինչպէս էր անցկացրել իր կեանքը մեր մայրը. այստեղ կը ծանօթանանք նրա մօր հետ, մեզ անծանօթ պապերիս հետ, որոնց նամակներն էլ այստեղ են. յիշում ես, թէ ինչպէս նա մեզ պատմում էր նրանց մասին»։

Նրանք հանեցին արկղից մի քանի տասնեակ փոքրիկ կապոցներ. այդ կապոցները մեծ խրնամքով կապած էին եւ կանոնաւոր դասաւորած։ Նրանք դրեցին այդ կապոցները մահճակալի վրա, ընտրեցին նրանցից մի կապոց, որի վրա գրած էր «հայր», բաց արին եւ սկսեցին կարդալ։

Դրանք հին, դեղնած նամակներ էին, ինչպէս լինում են ամեն մի ընտանիքում։

Առաջինը սկսվում էր. «Իմ թանդագին», երկրորդը. «Իմ սիրելի եւ փոքրիկ աղջիկս», յետոյ. «Իմ թանդագին որդի», վերջապէս. «Իմ սիրելի աղջիկ»։ Կոյսը կարդում էր բարձրաձայն եւ ազդու. նրանց սրտում զարթնում էին քնքոյշ յիշողութիւններ։ Իսկ դատաւորը, մահճակալին կռթնած, լսում էր նրան, չը հեռացնելով աչքերը իր մօրից։ Թւում էր, թէ անշարժ մարմինը զգում էր այդ բոլորը եւ ուրախանում։ Քոյր Եւլալիան ընդհատեց իր ընթերցումը, ասելով. «Պէտք է այս բոլորը դրնել նրա գերեզմանի մէջ եւ նրանցով պատել նրա դիակը պատանի տեղ»։

Նա վերցրեց երկրորդ կապոցը, որի վրա ոչինչ չը կար գրած, բաց արեց մի նամակ եւ սկսեց բարձր ձայնով կարդալ. «Իմ պաշտելի, ես սիրում եմ քեզ խելագարութեան չափ։ Երէկվանից ես տանջվում եմ, յիշելով քեզ. ես զգում եմ քո շրթունքների հպումը իմ շրթունքներին, քո աչքերը իմ աչքերիս վրա, քո մարմինը իմ գրկում։ Սիրում եմ քեզ ջերմ, անխախտելի սիրով. ես զգում եմ մի տեսակ ցանկութիւն տիրել քեզ, կամենում եմ, որ իմը լինես յաւիտեան։ Իմ շրթունքները այրվում են քո շրթունքների կրակից...»

Դատաւորը ուղղվեց, կոյսը լռեց։ Եղբայրը խլեց քրոջ ձեռքից նամակը եւ նայեց ստորագրութեանը։ Ազգանուն չը կար. միայն գրված էր. «Քեզ պաշտող Հանրի»։ Նրանց հօրը կանչում էին Բընէ. նշանակում է՝ նամակները նրանից չէին։ Որդին տենդային արագութեամբ քրքրեց կապոցը եւ հանեց մի ուրիշը։ «Ես այլ ես չեմ կարող դիմանալ առանց քո փաղաքշանքների...», կարդաց նա։ Եւ լուռ, խիստ կերպով, ինչպէս դատաստանական ամբիոնից, նայեց նա իր մօրը։ Կոյսը, ձգված՝ ինչպէս մի արձան, չէր հեռացնում աչքերը իր եղբօրից, սպասելով նրա վճռին։ Դատաւորը կամաց հեռացաւ ննջեցեալի անկողնից եւ մօտեցաւ պատուհանին։ Ցառելով աչքերը դէպի անթափանցելի մթութիւնը, նա խորասուզվեց մտածմունքների մէջ։

Երբ որ նա շուռ եկաւ, քոյր Եւլալիան դեռ կանգնած էր մահճակալի մօտ. բայց նրա աչքերը չոր էին եւ գլուխը թեքված դէպի կուրծքը. եղբայրը մօտեցաւ մահճակալին, հաւաքեց ցրված թղթերը եւ գցեց արկղը։

Եւ երբ վաղորդեան արեգակի առաջին ճառագայթները ներս թափանցեցին վարագոյրի ետեւից, դժգունացնելով մոմերի բոցը, դատաւորը կամաց թողեց բազկաթոռը, վեր կացաւ եւ, առանց նայելու մօր վրա, որին նա արդէն դատապարտել էր, ասաց հանդարտ.

—«Այժմ, քոյր իմ, գնանք այստեղից»...

Թարգմ. ռուս. Արմ. Յովհ.

—Ո՞ւր գնայ հին արհեստով ապրողը, ի՞նչ անէ նա։ Ի՞նչ անէ մեր երկրի երկրագործը, արհեստաւորը, սայլապանը, որ պատրաստված չէ յարմարվելու նոր կեանքի պահանջներին։

Մեզ մոտեցել էին մի քանի անձինք եւ լուռ լսում էին մեր խօսակցութիւնը եւ վիճաբանութիւնը։ Ցանկարծ նրանցից մէկը մէջ մտաւ իր բացականչութիւնով։

—Եթէ ցանկանանք էլ մի նոր բան սովորելու, մի նոր արհեստ ձեռք բերելու, ո՞վ պէտք է մեզ օգնէ, հարցրեց նա։

Մենք դժուարացանք պատասխանելու։

—Ով որ երկաթուղի է շինում, շարունակեց նա, թող մի քանի տասնեակ արհեստանոցներ ու դպրոցներ բանայ մեր երկրում, որ մենք էլ, հին արհեստը կորցնելով, նորը ձեռք բերենք։

—

Մենք ծանօթացանք նոր խօսակցի հետ։ Նա մի հայ էր Քեշիշքանդ գիւղից, որ եկել էր Բաշ-Նորաշէն ստանալու լրագիրների վերջին համարները։

Նա պատմեց մի մխիթարական փորձի մասին, որ ձեռնարկել են տեղական գիւղական գրագէտ երիտասարդները։ Նրանք կազմել են ընթերցասիրական մի փոքրիկ ընկերութիւն։

—Առանձին-առանձին մենք չէինք կարող շատ լրագիրներ եւ գրքեր ձեռք բերել, իսկ միացած ոյժերով կարող ենք։ Մենք բերել ենք տալիս երկու օրինակ «Մշակ», երկու օրինակ «Մուրճ», մի-մի օրինակ Աղբիւր-Տարազ, «Новое Обозрѣніе» եւ մտադիր ենք բերել տալ ընթերցանութեան գրքեր։

—Հետաքրքրական է, բացականչեցինք մենք համակրանքով։

—Մեզանից իւրաքանչիւրը պէտք է վճարէ տասը ռուբլի։ Նա իրաւունք կունենայ հերթով կարդալու բոլոր հրատարակութիւնները։

—Միայն ձեր գիւղացիները կարող են օգտվել ձեր գրքերից թէ ուրիշներն էլ, հարցրի ես։

—Մեր գործին, պատասխանեց նա, մասնակցում են եւ շրջակայ գիւղերի գրագէտ անձինք, բայց լրագիրների եւ գրքերի կենտրոնական պահեստատեղը նշանակված է Քեշիշքանդ գիւղում։

Մեզ շատ ուրախացրեց Դարալագեազի գիւղական գրագէտների այդ գեղեցիկ փորձը։

Եթէ ուրիշ տեղերում էլ նոյնպիսի փորձեր սկսէին, որքան լաւ կը լինէր։ Լրագիրը եւ գրքերը կը զարթեցնէին գիւղական մտածողութիւնը եւ կամաց-կամաց հանդէս կը բերէին մի շարք կուլտուրական հարցեր գիւղերի համար։

Մենք չէինք ափսոսում, որ ստիպված էինք աւելորդ մի ժամ մնալ Բաշ-Նորաշէնում։ Վերադարձանք կայարան եւ շարունակեցինք մեր ճանապարհը։

—

Քարվանսարայ կայարանում մեզ զբաղեցրին ոչ քարվանսարացիները, այլ հարեւան Վերին-Աղդան գիւղի մի քանի ներկայացուցիչներ։

Նրանք եկել էին պօստատուն նամակներ եւ խնդիրներ ուղարկելու իրանց հետաքրքրող մի գործի առիթով։

—Ազատեցէք մեզ մեր բարերարներից։

Այս խօսքերով դիմեցին նրանք մեզ, երբ մենք զրոյց սկսեցինք նրանց հետ։

—Մերը նոր գալները եւ մեր լիազօրները դուրս եկան մեր թշնամիները, որոնց դէմ այժմ ստիպված ենք բողոքելու։ Ճանապարհ ցոյց տուէք։

—Բանը ինչումն է, հարցրինք մենք։

—Ահա ինչումը։ Մեր գիւղական հողի սահմաններում չատ հանքատեղեր կան, որոնք պարունակում են պղինձ եւ ուրիշ մետաղներ։ Մենք լիազօրութիւն տուինք մի քանի անձանց, որ նրանք գիւղի անունից բանակցութեան մէջ մտնեն պատշաճաւոր հիմնարկութիւնների հետ շահագործութեան իրաւունք ձեռք բերելու։ Սակայն այդ մեր ընտրեալները մեզ խաբեցին։

—Ինչպէս։

—Նրանք իրաւունք են ձեռք բերել հանքերի վրա իրանց անունով։

—Անհաւատալի է, նկատեցինք մենք, որովհետեւ կարող են պատասխանատուութեան ենթարկվել։

—Մենք էլ փաստաբան ենք վարձել, որ պաշտպանի մեր իրաւունքները։ Մենք վճռել էինք հանքերից ստացած օգտի մի մասը յատկացնել մեր գիւղական դպրոցին, իսկ միւսը մեր ամբողջ հասարակութեանը։

—Ցաւենայն դէպս, վտանգաւոր խաղ են սկսել ձեր լիազօրները, յայտնեցինք մենք։

—Փողը կուրացրել է մարդկանց, պարոններ։ Նրանք էլ իրանց կողմից ամեն ջանք գործ են դնում իրանց չար դիտաւորութիւնը առաջ գցելու, քանի որ խանգարող չը կայ։

Գիւղացիները մի առ մի թուեցին այն մարդկանց անունները, որոնք յանձն են առել այդ չար գործը եւ ցոյց տուին 49 հոգու ստորագրութեամբ կազմած մի բողոքաթուղթ, որի վաւերականութիւնը հաստատել էր տանուտէրը իր կնիքով։

Անհաւատալի էր թուում իմ աչքերին իմ տեսածը։ Լիազօրների ցուցակում ես կարդացի հետեւեալ գիւղացիների անունները՝ Թ. Փորքաչեանց, Ց. Ղլէղեանց, Դ. Մելիքսեդեան, Ս. Բազմանեան, Ց. Ստեփանեան, Ս. Բէգինեան, Վ. Խառատեան, Ց. Ցովսէփեան, Ս. Ստեփանեան, Ն. եւ Ս. Զիլինգարեան, Կ. Ալլահվէրդեան, մի քահանայ եւ երկու ուրիշներ։

Մենք շարունակում էինք կասկածով վերաբերվել, իսկ գիւղացիները իրանց ասածն էին պնդում։

Անհաւատալի էր թուում այդպէս օրը ցերեկով ապաստակութիւն անելը։

Արդեօք թիւրիմացութիւն չը կա՞յ այդտեղ։

—Որքան լաւ կը լինէր, որ բարձած մեղադրանքը անհիմն դուրս գար եւ գիւղի ժողովրդի իրաւունքը անխախտ մնացած լինի։

—

Ես կը պատմէի ձեզ եւ այն, ինչ որ հաղորդեցին մեզ Աչաջուր գիւղի քահանայի սխրագործութիւնների մասին։ Բայց հաստատ խօսք եմ տուել այս անգամ ոչինչ չը գրել հոգեւորականների մասին։

Վերջապէս հասանք երկաթուղու կայարանը եւ ուղեւորվեցինք դէպի Թիֆլիս։

Վրթին

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

24 մայիսի

ԿՐԷՄԷՆՉՈՒԳ։ Անձրեւ եկաւ եւ կենդանութիւն տուեց բուսականութեանը։

ԿԱԶԱՆ։ Ամեն տեղ եկող անձրեւները չատ բարերար ներգործութիւն ունեցան. աշնանացանները լաւանում են. գարնանացանը վերջացած է, բացի ձիակորեկից եւ կտաւատից։ Խոտերը առ այժմ բաւարար են։

ԼՕՁ։ Տեղի ունեցաւ այստեղի մանուֆակտուրային-արդիւնաբերական դպրոցի նոր շինութեան հիմնարկութիւնը։

ՍԻՄԲԻՐՍԿ։ Տոհմային քաղաքացի Նիկոլայ Եակովլեվիչ Շատրով նուիրեց Սիմբիրսկի առեւտրական դպրոցին երկու քարաշէն տուն։

ՎԻԵՆՆԱ։ Երեկոյեան 6 ժամին կայսրի մօտ շէնբրունեան պալատում կայացաւ ճաշ, որին մասնակցում էին ռուսաց դեսպանութեան խորհրդական Բուդբէրգ դեսպանութեան մնացած կազմով, ռուսաց օֆիցէրական պատգամաւորութեան անդամները, զինուորական մինիստրը եւ բարձրաստիճան պալատականները։

ՊԱՐԻԶ։ Այսօր, պատգամաւորների ժողովի յանձնաժողովում բիւջէտը քննելու ժամանակ, ֆինանսների մինիստրը մատնացոյց արեց այն բանի վրա, թէ ինչպիսի դժուարութիւններ կարող են ծագել յանձնաժողովի երէկ կայացրած այն որոշման պատճառով, թէ եկամտային հարկը պէտք է սկզբունքով մտցնել 1902 թւի բիւջէտի մէջ։ Այնու ամենայնիւ յանձնաժողովը ընդունեց երէկվան վճիռը։

ՊԷԿԻՆ։ Հրդեհը արգելված քաղաքի արեւմտեան մասում, որ գրաւած ունեն ամէրիկացիները եւ եապօնացիները, սկսվեց երեւի կայծակն ընկնելու պատճառով երէկվայ անձրեւախառն փոթորկի ժամանակ Պէկինում։ Չը նայելով սաստիկ անձրեւին, կրակը տարածվեց եւ լափեց շատ շինութիւններ, որոնց թուում արխիվը եւ կայսերական գրադարանը։ Անվնաս մնացին մեծ միջին դահլիճը, նախնիքների տաճարը եւ կայսերական մասնաւոր սենեակները։ Մարդկային զոհեր ըստ երեւոյթին չեն եղել։ Հրդեհի տեղը ամեն կողմից շրջապատված էր, որ բացատրվեց՝ կողոպտողներին մօտ չը թողնելու անհրաժեշտութեամբ։

ՊԷԿԻՆ։ Տեանձինից այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, կիրակի օր տեղի ունեցած կռւի ժէջ, անգլիական գիշերապահ խումբը սկսեց հրացան արձակել ֆրանսիական մի զինուորի վրա, որը հանաքով բարձրացել էր արճատան տանիքի վրա, եւ վիրաւորեց նրան. այդ զինուորի ընկերները եւ մի քանի գերմանացի զինուորներ սկսեցին սուիններ գործ դնել անգլիացիների դէմ եւ քարեր արձակել նրանց վրա. անգլիական գիշերապահ խումբը սկսեց կրկին հրացաններ արձակել, որի ժամանակ երեք ֆրանսիացիներ սպանվեցին եւ չորս ֆրանսիացիներ ու չորս գերմանացիներ վիրաւորվեցին. սպանվեց, ի միջի այլոց, եւ մի մարդ, որ կռւի տեղի մօտով պատահմամբ անցնում էր կառքով։ Բացի Վալդերզէէից, սպանվածների թաղմանը ներկայ էին նաեւ գեներալ Վուարօն եւ Վագակ։ Քննութիւնը շարունակվում է։

ԱԼԻՎԱԼՆՕՐՏ։ Այստեղից օգնութեան համար Զէմստոուն ուղարկած անգլիական զօրքերը յետ մղեցին բօէրներին, վնասներ պատճառելով նրանց։ Զէմստոուներում բօէրների գրաւած մթերքների մի նշանաւոր մասը յետ խլվեց։

ՊԱՐԻԶ։ Բիւջէտային յանձնաժողովը ենթայանձնաժողով նշանակեց եկամտային հարկի հարցը քննելու համար։ Իսկոյն գումարված ենթայանձնաժողովը որոշեց վերացնել ուղղակի յարկի չորս կատեգորիաները, փոխարինելով նրանց պրոգրէսիվ հարկով եկամուտների վրա։ Դիմօն, որը ընտրվեց զեկուցանող, ուրբաթ օրը զեկուցեց բիւջէտային յանձնաժողովին իր եզրակացութիւնները։

ԿԱՆԷՑԱ։ Բոլոր ընդհանուր հիւպատոսները պատուէր ստացան իրանց կառավարութիւններից չընդունել Կրետէի ազգային ժողովի ոչ խնդրագիրը, ոչ որոշումները Կրետէն Ցունաստանի հետ միացնելու նկատմամբ։ Պետութիւնների պատուէրը հաղորդված է նաեւ Ռէտիմնոյի ու Կանդիայի փոխ-հիւպատոսներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 23-ին արտասահման ուղեւորվեց Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ։

Մայիսի 24-ին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան, Թագաժառանգի ուղեկցութեամբ, այցելեց ի Տէր հանգուցեալ Կայսր Ալէքսանդր III-ի արձանը պատրաստող յայտնի քանդակագործ իշխան Տրուբեցկոյի արհեստանոցը։

Մայիսի 24-ին տեղի ունեցաւ գեներալ-ադիւտանտ Ստիւրլէրի յուղարկաւորութիւնը եւ թաղումը։ Հանգստեան ժամասացութեան սկզբում Գատչինայից ժամանեցին եկեղեցի Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, Թագաժառանգը, Մեծ Իշխաններ Վլադիմիր Ալէքսանդրովիչ, Կիրիլ Վլադիմիրովիչ, Նիկոլայ Նիկոլայեվիչ, Պետր Նիկոլայեվիչ եւ Միխայիլ Նիկոլայեվիչ եւ Պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկիյ։ Հանգուցեալի մարմինը հողին յանձնվեց Սմոլենսկի գերեզմանատունը։

ԳՐՕԴՆՕ։ Մայիսի 24-ին Մոսկվա-Բրեստեան երկաթուղու Լինեսվո կայարանի մօտ երկու սայլ ընկան № 4 պօստատար գնացքի տակ. երեք ձի սպանվեցին. երկու մարդ թեթեւ վիրաւորվեցին։ Վիրաւորվածներին ուղարկեցին Բրեստի երկաթուղիական հիւանդանոցը։

ՑԱՐԻՑԻՆ։ Եղբ. Բաշենինիների փայտի նաւամատուցային պահեստում այրվեց երկու հարիւր հազար արժողութեամբ փայտեղէն, որ ապահովագրված չէր։ Ենթադրվում է հրձիգութիւն։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիական բանկը իջեցրեց զեղջը 4-ից $3^1/_2$%-ի։

ԼՕՆԴՕՆ։ Հարաւային Աֆրիկայում գործող ոչ զինուորական բժիշկների պատուին տուած ճաշկերոյթի ժամանակ Բրոդրիկ յայտնեց այն միտքը, թէ հարաւ-աֆրիկեան պատերազմում պարզվեց, որ բրիտանական զօրքերը աւելի վատ չեն վարժված, քան ցամաքային պետութիւնների զօրքերը։ Չինաստանի կռուի փորձն էլ ցոյց տուեց օտարազգիներին, որ նրանք դեռ շատ բան կարող են սովորել անգլիացիներից։ Պատերազմը շարունակում է ժղվել հարաւային Աֆրիկայում զօրեղ եւ մարդասէր կերպով։ Կառավարութիւնը վճռել է առանց փորձելու չը թողնել ոչ մի միջոց, որ կարող է երաշխաւորել պատուաւոր խաղաղութիւն։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Այն ամերիկացիների հարցապնդման առիթով, որոնց ազգականները կրռւում էին բօէրների կողմից եւ գերի են ընկել անգլիացիների ձեռքը, Կապչտադտի ընդհանուր հիւպատոսը հաղորդեց ատատա-սէկրէտար Գէյին, որ գերիները գտնվում են Սիմօնստաունում, Դուրբանում, Սբ. Հեղինէի կղզում եւ Ցէյլոն կղզում, որ նրանց մասին ինչպէս պէտքն է հոգս են տանում այնտեղ եւ որ նրանց այժմեան դրութիւնը աւելի լաւ է, քան անգլիացի զինուորների դրութիւնը։

ՇԱՆԳՀԱՑ։ Լրագիրների ասելով, կայսերական հրովարտակով հրամայված է առանձին քննութիւններ անել բարեփոխված վարչութեան մէջ պաշտօններ տալու համար։ Թեկնածուները պէտք է ընտրվեն մասամբ Պեկինում ծառայող աստիճանաւորներից, մասամբ էլ փոխարքաների եւ նահանգապետների նշանակած անձերից։ Այդ հրովարտակով, բացի այդ, վերացվում է արքունիքին ամեն տարի տրվող տուրքը, բացի թէյից եւ դեղերից։

ԲԵՐԼԻՆ։ Այսօր տեղի ունեցաւ հրդեհաշէջների համաժողովի բացումը։ Ռուսաց բաժինը մեծ աջողութիւն ունի ցուցահանդէսում։ Ներքին գործերի մինիստրը իր հաճոյքը յայտնեց Գուստավ Լիստին սրա ցոյց դրած իրերի առիթով։

ՏԵԱՆՁԻՆ։ Պեկինի եւ Տեանձինի մէջերքում տեղացին յորդ անձրեւներ, որոնցից ջուրը սաստիկ բարձրացաւ։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Բօէրների զօրաբաժնի մի մասը, բէյէրի հրամանատարութեամբ, բաղկացած ընդամենը 400 հոգուց, յանկարծակի բռնվեց Վարմբադի մօտ գնդապետ Վիլսոնի 240 հոգուց բաղկացած զօրաբաժնից եւ ջարդ կերաւ. բօէրների կողմից ընկան 37 հոգի, որոնց թուում եւ Բէյէրը։ Անգլիացիների կողմից սպանվեցին երեքը եւ վիրաւորվեցին տասնրհինգը։

25 մայիսի

ՊՕԼՏԱՎԱ։ Երկարատեւ եւ չը տեսնված չոքից յետոյ հիանալի անձրեւ եկաւ. բուսականութիւնը կեանք առաւ։ Գաւառներից չատ նպաստաւոր լուրեր են գալիս ապագայ հունձի նկատմամբ։

ՏԱՇԿԷՆՏ։ Մայիսի 26-ին ընդհանուր նահանգապետը եւ հրաւիրված անձինք ու Տաշկէնտի հասարակութեան ներկայացուցիչները արտակարգ գնացքով ուղեւորվելու են Ամու-Դարիայի վրա գցված Զարջույեան կամուրջի բացման ներկայ լինելու։

ԼՕՆԴՕՆ։ Երէկվայ լրագիրներում տպված կորուստների ցուցակից երեւում է, որ Գինարսրիվէրի մօտ մայիսի 19-ին ու 20-ին տեղի ունեցած կռիւներում սպանված են եօթ մարդ եւ վիրաւորված 18, բոլորն էլ Կիտչէնէրեան հրացանաձիգներից։ Կորուստների այդ ցուցակը հաւանականօրէն վերաբերվում է Վիլսոնի վերջին կռուին, որովհետեւ նա Կիտչէնէրեան հրացանաձիգների հրամանատարն է։

ԲԵՐԼԻՆ։ Վալդերզէէ զեկուցանում է Տեանձինից. «Ես հրաժարվեցի գլխաւոր հրամանատարի պաշտօնից. այսօր, Տօկիօ տանող ճանապարհով, ուղեւորվում եմ Չինաստանից։ Տեանձինում ձեռք են առնված խիստ միջոցներ, որպէս զի ընդհարումներ չը կարողանան տեղի ունենալ զանազան ազգութիւններին պատկանող զօրամասերի միջեւ։ Բազմաթիւ գերմանական պատգամաւորութիւնների հետ միասին ես ներկայ գտնվեցի ֆրանսիացի զինուորների թաղման ժամանակ։

Մայիսի 21-ի գիշերը Պեկինում սաստիկ ամպրոպից յետոյ, երեւի կայծակից, հրդեհ սկսվեց արգելված քաղաքի արեւմտեան մասի եամէններից մէկում։ Այրվեց մի տուն, որ բաղկացած էր բազմաթիւ առանձին շէնքերից. գլխաւոր տաճարները, սակայն, ըստ երեւոյթին անվնաս են մնացել»։

26 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 25-ին, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ծննդեան օրը, մայրաքաղաքը զարդարվեց դրօշակներով. հանդիսաւոր մաղթանքներ կատարվեցին։ Իսահակեան տաճարում պատարագիչն էր Անտոնի միտրոպոլիտը։ Երեկոյեան լուսավառութիւն կար։—Մոսկվայից, Զերնիգովից, Կիեվից, Լօձից, Վլոդդայից եւ Նովգորոդից հեռագիրներ են ստացված Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ծննդեան օրի առիթով կատարված հանդիսաւոր մաղթանքների մասին։

ՄՕՍԿՎԱ։ Լուրերին նայելով, Սօլդատենկով կտակել է շարունակել իր հրատարակչական գործունէութիւնը նրա հրատարակութիւնների եկամուտով եւ հրատարակութիւնները նուիրել զանազան դպրոցական հիմնարկութիւնների։ Գումարներ են թողնված գիտութիւնների Կայսերական ակադեմիային Արեւելքի պատմութեան ուսումնասիրութեան համար, չքաւոր ուսանողներին օգնող կոմիտէին եւ զանազան անկելանոցների ու ապաստարանների։ Մոսկվայի վաճառականական հասարակութեան կտակված է 1,300,000 ռուբլի այն պայմանով, որ 300,000-ով հիմնվի, իսկ մի միլիոնով պահպանվի արհեստագիտական դպրոց։ Սօլդատենկովի անունը կրող ապագայ հիւանդանոցին փող է կտակված այն պայմանով, որ քաղաքը այդ հիւանդանոցը հիմնի Մոսկվայի բոլոր բնակիչների համար, առանց դասակարգի խտրութեան։

ՎԻԼՆԱ։ Սաստիկ անձրեւ եկաւ, որ չատ տեղ փչացրեց սալայատակը։ Անձրեւը կեանք տուեց բուսականութեանը չոք օրերից յետոյ։

ՕԴԷՍԱ։ «Կիեվ» շոգենաւով այստեղ եկան երկու կօրէյացիներ, որոնցից մէկը նշանակված է Պետերբուրգ գնացող կօրէական արտակարգ դեսպանութեան քարտուղար, եւ Նագասակիի ռուսաց հիւպատոսը։

ԲԵՐԼԻՆ։ Ռուսաց Թագուհու ծննդեան առիթով, ռուսաց դեսպանական եկեղեցում ժամասացութիւն կատարվեց, որին ներկայ էին ռուսաց դեսպանը իր ամուսնու հետ, դեսպանութեան անդամները եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի դրագունեան գընդի օֆիցէրների պատգամաւորութիւնը։ Երեկոյեան ճաշ կար վերոյիշեալ գնդի օֆիցէրների մօտ, որին հրաւիրված էին ռուսաց դեսպանը եւ դեսպանութեան անդամները։ Դեսպանատան շինութիւնը եւ գնդի զօրանոցները զարդարված էին դրօշակներով։

ՎԻԵՆՆԱ։ Ռուսաց 35-դ դրագունեան գնդի օֆիցէրական պատգամաւորութիւնը ճանապարհ ընկաւ վերադառնալու Ռուսաստան։

ԲԵԼԳՐԱԴ։ Յունիսի 1-ին կը գումարվի

սերբ-բոլգարական յանձնաժողով՝ սահմանները ճիշդ որոշելու համար, որպէս զի նրանց խախտումը անհնարին դառնայ։ Միաժամանակ կը քննվեն վարձատրութեան վերաբերեալ պահանջները՝ սահմանային վէճերի պատճառով։

ՎԻԵՆՆԱ։ Ռուսաց Թագուհու ծննդեան օրվայ առիթով, ռուսաց դեսպանութեան եկեղեցում տեղի ունեցաւ ժամասացութիւն դեսպանատան խորհրդականի եւ դեսպանութեան անդամների ներկայութեամբ։

ԲԵՐԼԻՆ։ Մայիսի 24-ին կայսերական զոյգի նախաճաշին հրաւիրված էին իշխանուհի Գոլիցինա եւ կոմսուհի Շուվալովա իր աղջկայ հետ։

ՊԱՐԻԶ։ Eclaire» լրագրի խօսքով, ֆրանսիական քաղաքականութիւնը ներգործական կը դառնայ Մարոկկոում. սուլթանը ընդունում է ֆրանսիական հովանաւորութիւնը, իսկ Գերմանիան, Անգլիան, Իտալիան եւ Ռուսաստանը այդ բանի համար կը տան իրանց համաձայնութիւնը։ Կը բողոքէ միայն Սպանիան։

ԲԵՐԼԻՆ։ «Reichsanzeiger» լրագրում հրատարակված է ծանուցումն մէդալ հաստատելու մասին ի յիշատակ պատերազմական անցքերի Արեւելեան Ասիայում՝ բաժանելու համար գերմանական արշաւազօրքին մասնակցողներին։ Այդ մէդալը կարող է տրվել եւ ուրիշ այն զօրաբաժիններում մասնակցողներին, որոնք դաշնակից էին գերմանական զօրաբաժնին։

ԲԵՐԼԻՆ։ Գենեռալ-լէյտենանտ Լէսսել հաղորդում է. «Հաւաստված է, որ անցեալ կիրակի Տեանձինում տեղի ունեցած անկարգութիւնների ժամանակ գերմանացի զինուորները չեն մասնակցել զէնք գործ դնելու մէջ։ Այդ միջոցին գնդակի վէրք ստացած երեք զինուորների առողջական դրութիւնը բաւարար է։ Պեկին քաղաքի արգելված մասում կայծակից առաջացած հրդեհը ոչնչացրեց երեք տուն եւ կայսերական գրադարանը»։

Կ. ՊՕԼԻՍ։ Այսօր տիեզերական պատրիարքի ընտրութիւնների ժամանակ ընտրվեց նախկին պատրիարք Յովակիմ III. սինոդը նրան ընտրեց միաձայն։ Ընտրութիւնը առաջարկված է սուլթանին ի հաստատութիւն։

ՍՕՖԻԱ։ Ռումինական կառավարութիւնը տեղեկացրեց բոլգարական կառավարութեանը, որ ինքը աւելի խիստ հսկողութիւն է նշանակել սահմանի վրա, Բոլգարիայից գաղթող մահմեդականների սաստկացող հոսանքի դէմ։ Դրա հետ միասին ռումինական կառավարութիւնը յայտնեց, որ այդ ձեռք առած միջոցը բոլորովին ազատ է որ եւ է քաղաքական նըպատակներից եւ կապ ունի բացառապէս գործնական նկատումների հետ։

ՎԻԵՆՆԱ։ Աւստրիական պատգամաւորութիւն։ Գոլուխովսկի վճռական կերպով հերքում է այն մեղադրանքը, իբր թէ Աւստրիան խախտել է չէզոքութիւնը հարաւ-ափրիկեան պատերազմում։ Քանի որ Անգլիան մի քանի անգամ յայտարարել էր, որ ինքը չի ընդունի ոչ մի միջնորդութիւն եւ չի դիմի ոչ մի միջնորդ դատարանի, ուրեմն միջնորդութիւն ստանձնելը կը նշանակէր արով հարուած հասցնել ջրին։ Աւստրիան ոչ մի հիմք չունի որ եւ է թշնամական բան անել Անգլիայի նկատմամբ, որի հետ նա ուզում է ապրել հաշտ եւ բարեկամաբար։ Այն հարցանդումին, թէ արդեօք կառավարութիւնը տրամադիր չէ որ եւ է քայլեր անել Բօսնիայի եւ Հերցեգովինայի գըրաւումը միացում դարձնելու նպատակով, Գոլուխովսկի պատասխանեց, որ կառավարութիւնը կանգնած է Բերլինի դաշնադրութեան հիմքի վրա եւ Աւստրիան բաւականանում է առ այժմ այդ երկիրների գրաւումով։

ՎԻԵՆՆԱ։ Աւստրիական պատգամաւորութիւն ընդունեց արտաքին գործերի մինիստրութեան բիւդժէտը։

ՎԻԵՆՆԱ։ Ֆինանսների մինիստրը յայտարարեց պետական 4% բէնտայի բաց թողնելու մասին 125 միլիոն կրոն անուանական գումարի 94% կուրսով։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Բրոդրիկ պատասխանում է իրան տրված հարցին, թէ կիտչէնէր հրամանագիր չէր ստացել, որը կարողանար արգելել նրան ընդունելու բօէրների առաջարկութիւնները. նա պարտաւոր է բոլոր առաջարկութիւնները անյապաղ հաղորդել կառավարութեանը։ Կիտչենէր եւ կառավարութիւնը մերժեցին անկախութեան հարցի քննադատութիւնը։ Լաբուշէր հարցնում է. արդեօք կառավարութիւնը բօէրներին նոյնպիսի անկախութիւն կը տայ, որպիսին վայելում են Կանադան եւ Աւստրալիան։ Զէմբէրլէն պատասխանում է. «Ներկայ րոպէին, ի հարկէ, չէ»։ Բրոդրիկ հաղորդում է ապա, որ Կիտչենէր հերքում է այն լուրը, որ իբր թէ Ֆալկֆոնտէնում բօէրները սպանեցին երկու գերիների։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐ. ԹԱՏՐՕՆ
Կիրակի, մայսիսի 27-ին
Ա. ՄԱՆԴԻՆԵԱՆ
մասնակցութեամբ դերասանների եւ սիրողների, կը ներկայացնէ
I
ԽԱՆՈՒՄ
Կոմ. 3 գործ. 4 պատկ., հեղ. Ցագարելիի, թարգմ. Արաքսեանի
II
ՕՍԿԱՆ ՊԵՏՐՕՎԻՉՆ ԷՆ ԿԻՆՔՈՒՄԸ
Կատակերգ. 1 գործ. հեղ. Սունդուկեանցի
Սկիզբն է ուղիղ 8 ժամին
Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում։

Լոյս տեսան
Մ. ՎԱՐԴԻԿԵԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ
ՁՈՐՍ ՀԱՅԵՐԷՆ ԵՐԳԵՐ
դաշնամուրի նուագակցութեամբ երգելու համար
1) «Հովիւ»—(էլէգիա)։ 2) «Ինձ մի տիրիր» (romance)։ 3) Յայտնի հայկական ժողովրդական սէրէնադա—«Եօթ օր եօթ գիշեր» եւ 4) «Առաջին սէր» (romance)։
Ծախվում են Թիֆլիսում Սուզանաճեանցի երաժշտական խանութում եւ սարկաւագ Միքայէլ Շալամեանցի մօտ, որ բնակվում է Պետերբուրգի հայոց եղեղեցական տանը։ 1—3

ՊԱՆՍԻՕՆ
ՏԷԲ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Գնում է ամարանոց, ՅԽԻՆՎԱԼ, յունիսի 10-ին։
Ընդունվում են աշակերտներ։ Հասցէն՝ Միքայէլեան փողոց, № 101։
(կ. չ. ո. կ.) 1—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ իր ատեանում, ներկայ տարվայ մայիսի 28-ին, ցերեկ. ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կառուցանելու հատ. 0,33×0,22 պագ. ս., երկարութեամբ 105,00 պագ. սաժ. բէտօնից կոյուղի չինելու, Միլիտինսկայա փողոցից սկսած Նիկոլաեվսկայա փողոցի վրայով, մինչեւ Խիթարովի տունը, 1950 ր. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը 9-ից մինչեւ 3 ժամը ցերեկվայ։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ իր ատեանում ներկայ տարվայ մայիսի 28-ին, ցերեկվայ ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կառուցանելու բէտօնից կոյուղի հատ. 20×14 վերշ. երկարութեամբ 32,00 պագ. սաժ. Վելիկօկնեաժեսկայա-Նաբերեժնայա փողոցից, Ռուկի տան մօտ, մի եւ նոյն փողոցով մինչեւ Միքայէլեան պերէուլօկ, 750 ր. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը, 9-ից մինչեւ 3 ժամը ցերեկվայ։ 2—3

Լոյս տեսաւ
ՀԻԻՍԻՍԻ ԱՐԾԻՒԸ
Պատմական վէպ
Գինն է մէկ բուբլի առանց ճանապարհածախսի։ Դիմել Կենտրոնական գրավաճառանոց կամ հեղինակին՝ Тифлисъ, Дворянская улица № 6. Баграту Айвазянцу. Հեղինակին դիմողները ստանում են զիջումն։ 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին տարիների նման ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պեատիգորսկում) մայիս ամսից։
(հ. կ.) 9—10

Կիրակի, մայիսի 27-ին
«ՄՈՒՇՏԱՅԻԴ» ԱՅԳՈՒՄ
Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութեան օգտին
տեղի կունենայ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ
Երաժշտութեամբ, երգիչների մասնակցութեամբ, կոնֆէտտիով, ընծաներով եւ այլն։
Զբօսանքի սկիզբն է ժամը 3-ին կէսօրից յետոյ։ Մուտքի գինը՝ 20 կոպ.։ Երեխաներից 10 կ.։

ԳՈՒՏՏԵՆԲԷՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են հետեւեալ մանկական պատկերազարդ գրքերը

«Անդրադ Հանէսը», թարգմ. Լ. Մ.-Ադամեանի	40 կ.
«Կարէնն ու Մանէնը» » » »	40 »
«Պատիկ ու Զատիկ» » » »	40 »
«Եօթն ագռաւ» » » »	40 »
«Երեք կատուի պատմութիւն», հրատարակութիւն իշխ. Մ. Թումանեանի	20 »
«Կարմիր գդակ» » » » »	20 »
«Եասի արկածքները», թարգմ. Պ. Պ.	10 »
«Արեւելեան վիպաշխարհ», թարգմանութիւն Փ. Վարդանեանի	20 »
«Ոսկէ ձկնիկ», Գամառ-Քաթիպայի	10 »
«Ինչ է ասում սենեակը», թարգմանութիւն Զ. Տէր-Գրիգորեանի.	10 »

եւ այլ մանկական, վիպական եւ ժողովրդական գրքեր։ Գրախանութը ընդունում է գրքեր վաճառելու զանազան պայմաններով։ Հեղինակները, թարգմանիչները եւ հրատարակիչները նոր լոյս տեսած գրքերից կարող են ուղարկել «Գուտտէնբէրգ» գրախանութը՝ վաճառելու համար։
Գրախանութի հետ գործ ունեցողները պէտք է դիմեն՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“, Г. Галустяну. 1—2

ՄԱՍՆԱՒՈՐ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ
ՅԱԿ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ
(Բագու, Թաթեսօվսկայա փողոց)
Մայիսի 15-ից մինչեւ 28-ը կը լինի նոր մտնող աշակերտների քննութիւնը փոքր պատրաստական, մեծ պատրաստական եւ I դասարանները եկող 19⁰¹/₀₂ ուսումնական տարվայ համար։ Նախապատրաստական դասարանը ընդունվում են անգրագէտները առանց քննութեան։
Յունիսի 1-ից պրոգիմնազիայի պանսիօնը տեղափոխվում է սեփական ամարանոց՝ Սագարէջօ գիւղը, Թիֆլիսի գաւառում։ 5—6

Գ. Լ. ԿՈՒԶԱՆԵԱՆԻ ՊԱՆՍԻՕՆԸ
Յունիսի 10-ին տեղափոխվում է Բօրժոմ ամարանոցը։ Ցանկացողները իրանց որդիներին ուղարկել, կարող են դիմել մինչեւ յունիսի 7-ը, իսկ յետոյ պայմանների մասին տեղեկանալ դպրոցում։ Պարապմունքները ամառը չարունակվում են։ Աշակերտների ընդունելութիւնը ամեն օր։ Бебутовская ул., № 50. 2—6

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.
եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի (6/19 յունիսի) շոգենաւ՝ ԱՆԱՏՕԼԻ, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒԻ—եղբ. Վ. եւ Ի. Մուխաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկեանի, № 27։ ՆՈՎՈՐՈՍԻՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակատարներին։ 7—20

Նոր կազմակերպվող ընկերութիւն
„ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ“
Նպատակ ունենալով բանալ Թիֆլիսում տպարան, ձուլարան, կազմարան, տողարան, լիտոգրաֆ, խրօմոլիտոգրաֆ, ցինկոգրաֆ եւ առհասարակ այդ ճիւղին վերաբերեալ բոլոր մասերը, 100,000 ր. դրամագլխով, բաժանված 2000 պայերի, ամեն մի պայ 50 ր. արժողութեամբ, հրաւիրում ենք երկու տեսի անձանց, նախապէս ստորագրվողներին եւ նոր ստորագրվել ցանկացողներին վճարել առաջին նշանակված 5% վճարը, որը անում է 2 ր. 50 կ. ամեն մի պային, մայիսի 15-ից մինչեւ 30։ Վճարները ընդունում են՝ «Тифлисскій Листокъ» խմբագրութեան գրասենեակում, Մեսանիկովի խանութում, Дворцовая ул. եւ Նիկողայոս Աբրահամեանի մօտ, Николаевская ул., № 46։ Երբ պայերը կը տրվեն մինչեւ դրամագլխի կէսը, ընկերութիւնը կը համարվի կազմված։
(մ. 16, 18, 20, 24, 27) 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ծախվում են հետեւեալ գրքերը՝

Այվազեան Բ., Հիւսիսի արծիւը, պատմական վէպ, Թիֆլիս, 1901 թ. գ. 1 ր.	
Աղաֆիրեան Գր. եպս., Կրօնական-բարոյական խորհրդածութիւններ աստուածսիրութեան, առաքինութեան եւ բարեգործութեան եռանդ արծարծելու համար, 10 հատոր, Վղրշ. գ. 2 ր.	
Բարխուդարեան Յով., Մանկական խաղեր, գծագրված օրինակներով, Թիֆլիս, գ. 50 կ.	
Գիւլամիրեան Սիմ., Կիլիկիա, գեղարուեստական նկարներով, Պետր. գ. 1 ր. 25 կ.	
Դիկենս, Կեանքի դպրոցը, վէպ երիտասարդների համար, Թիֆլ. գ. 1 ր.	
Կրպէ, Կարս քաղաք, Մոսկվա, գ. 60 կ.	
Մուրադեան Մելք. եպս., Հովուական աստուածաբանութիւն, հոգեբուղխ գրուածք ամեն քրիստոնէի, Կ. Պոլիս, գ. 1 ր. 25 կ.	
Զէստաֆրտօնի ժառանգը, պատկերազարդ վէպ, Թիֆլ. գ. 1 ր.	
Պեստալոցցի, Լինհարդ եւ Գերտրուդ, վէպ ժողովրդի համար, Թիֆլ. գ. 1 ր. 50 կ.	
Պիեր Լոտի, Ուղեւորութիւն Զերնօգորիայում, Թիֆլ. գ. 10 կ.	
Սարգսեան Ս., Ադուլեցոց բարբառը (զոկերի լեզուն), լեզուաբանական հետազօտութիւն, Մոսկվա, գ. 2 ր.	
Տմբլաչի Խաչան, Ցնգլբաղ եւ զուռնա-տմբլա, Բագու, գ. 40 կ.	
Տէր-Աւետիքեան Նիկ., Կովկասեան հանքային ջրեր, Աբասթուման, Բօրժոմ, Պեատիգորսկ եւ այլն, Թիֆլ. գ. 10 կ.	
» Վերածնութեան դար, Թիֆլ. գ. 1 ր.	
Փայտաչէն խրճիթից մինչեւ սպիտակ տունը, պատկերազարդ, Թիֆլ. գ. 60 կ.	
Օդեսայի հայ ուսանողների աշխատ., Զօրջ Ստեփէնսօն՝ շոգեշարժ երկաթուղու հնարողը, Թիֆլ, գ. 1 ր.	
Ֆրդուսի, Ռոստամ եւ Զոհրաբ, ամբողջ վէպ եւ հատուածներ Շահնամայից. Շուշի, գ. 60 կ.	
Շուտով մամուլի տակից լոյս կը տեսնի Վ. Փափազեանի նոր գիրքը՝ «Պատմուածքներ» գ. 50 կ.	
Զիւանի, Մէլիք-Շահ հէքիաթը 25 կ.։	

Դիմել՝ Тифлисъ. Въ Центральную Книжную Торговлю. (ու. կ.) 2—2

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Мая 1901 г.
Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.